եղբարցն՝ Պետրոսին, Պօղոսին և Յարութիւնին մելիք բալումեանց, տուաք նոցա զայս վկայական կնքով և ձեռագրութեամբ մերով 'ի հաւատարմութիւն ամենայն տեսողաց և վասն ազգաբանութեան նոցա հարցողաց և վերահասուլինողաց: Գրեցաւ վկայականս յամի Տեառն 1815: Յամսեանն ապրիլի 8: 'Ի նախջուան քաղաքի

և վասն ձեր աղօթարար կաթողիկոս Ամենայն Հայոց

Եփրեմ

---

## ՇԱՄՇԱԴՆՈՒ ՄԵԼԻՔՆԵՐԸ

**Թ. 366.** եր. 222.

Յիսուսի Քրիստոսի . . . . . . . . . և որք ընդ մեզ անդամք սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Աթոռոյս յաղագս ազգաբանութեան ազնիւ Գրիգոր Թահիր բեգլանթարովին այսպէս գիտեմք և ճանաչեմք, որ նա է 'ի գաւառէն Շամշատինու և 'ի գեղջէն ղարամուրատու, յազգէ և յարենէ ազնուատոհմ իշխան Թահիր մելիք միանգամայն և բեգլանթարին, և զկնի ունելով զբնակութիւն յերկիրն արարատու և 'ի գեղջն բիւրականի: Եւ վասն այսպիսի ազգաբանութեան իւրոյ ունեցեալ է թէպէտ վըկայական գրեանս հանդերձ թագաւորապարգև իշխանական հրովարտակօք, բայց 'ի պատճառս սասանութեան երկրին կորուսեալ են այն ամենայն և անհետ եղեալ: Մեք ունելով զայսպիսի տեղեկութիւն վասն ազնուատոհմութեան և մելիքական իշխանութեան յիշեալ ազնիւ Գրիգոր Թահիր բեգլանթարովին, տուաք ինքեան զայս գիր վկայական կնքովք և իսկական ձեռագրութեամբք մերովք 'ի գիտութիւն ամենայն տեսողաց: Գրեցաւ յամի Տեառն 1814: Յունվարի 20: 'Ի ս. կաթուղիկէն Էջմիածին:

(Եփրեմ).

---